## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

Մանկապարտեզի շենքը կազմված է 2 մասնաշենքերից, որոնք հատակագծում ունեն "T" տառի տեսք: Ուղղանկյուն հատակագծային չափերն են` 65x9.8մ և 31.5x10մ: Կառուցվել է 1935-40թթ - ին: Հիմքերը ժապավենային խամքարե, պատերը կոպտատաշ տուֆ քարի շարվածքով, կիր/ավ. շաղախի կիրառմամբ: Ծածկերը իրականացված են I հարկում` պողպատե պրոֆիլներից հեծանների և ե/բ սալիկների տեսքով, իսկ II հարկում ծածկերն իրականացվում են մոնոլիտ ե/բ սալի տեսքով:

Շենքի կոնստրուկտիվ համակարգից կարելի  է ենթադրել, որ այն վերակառուցվել է, քանի որ առկա են ե/բ սյուների և հեծանների ավելացում շենքերի երկարությամբ արտաքին քարե պատերի թռիչքների միջնամասում:

Տանիքը լանջավոր է ասբոշիֆերից, արտաքին կազմակերպված ջրահեռացման համակարգով: Նախագծով նախատեսվում է, համաձայն  տրված  առաջադրանքի իրականացնել հետևյալ վերանորոգման  աշխատանքները.

1. Տանիքի հիմնանորոգում, փայտե ծպեղային համակարգի վերակառուցում, օգտագործելով նոր փայտանյութ և առկա փայտամածի առողջ մասը: Ասբոշիֆերից ծածկույն ամբողջությամբ նախատեսվում է փոխարինել ցինկապատ պրոֆ. թիթեղով: Վերնածածկի վրա նախատեսվում է իրականացնել  գոլորշամեկուսիչ շերտ 1 շերտ իզոգամով բիտումե մածիկի վրա և ավելացնել ջերմամեկուսիչ` մանրահատ խարամ:
2. II հարկում տեղաբաշխված 4 խմբերում նախատեսվում է իրականացնել ներքին հարդարման աշխատանքներ,  համաձայն առաջադրանքի, փայտե պատուհանները չեն փոխվելու: Կատարվելու է հատակների, պատերի և առաստաղների վերանորոգում` պահապանելով բարվոք վիճակում գտնվող հատվածները:
3. Նախատեսվում է մասնակի վերանորոգում կատարել կիսանկուղային հարկում տեղակայված խոհանոցային հատվածում:
4. Նախատեսվում է իրականացնել վերանորոգվող հատվածի ջեռուցում, էլ. լուսավորություն, ուժային էլ. մատակարարման և օդափոխության համակարգեր:
5. Մանկապարտեզը չունի գազամատակարարում, ուստի նախատեսվում է իրականացնել արտաքին գազամատակարարման համակարգ:
6. Նախատեսվում է, նաև, ջրամատակարարման խողովակի վքարային հատվածի փոխարինում նորով, վքարային  փականների փոխարինում նոր փականներով:

## Անհրաժեշտ տեխնիկական  միջոցներ  և մեխանիզմներ

ա)  Ինքնաթափ  ավտոմեքենա

բ)  Ավտոկռունկ

## Շինարարական նյութերին  և կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջներ

ա)  Իրականացվող  աշխատանքներում օգտագործվող   շին. կոնստրուկցիաները  և . նյութերը պետք է ունենան  10 տարվա երաշխիքային  ժամկետներ:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  ԳԾԱԳՐԵՐԻ  ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

| h/h | ԹԵՐԹԻ  ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հ/Հ |
|---|---|---|
| 1. | Ընդհանուր տվյալներ | ՃՇ-1 |
| 2. | Գլխավոր հատակագիծ Մ 1:100 | ՃՇ-2 |
| 3. | Նկուղային հարկի հատակագիծ  Մ 1:100 | ՃՇ-3 |
| 4. | II հարկի հատակագիծ  Մ 1:100 | ՃՇ-4 |
| 5. | II հարկ` հատակների մասնագիր | ՃՇ-5 |
| 6. | II հարկ` պատերի, առաստաղների և շեպերի մասնագիր | ՃՇ-6 |
| 7. | Նկուղային հարկ` հատակների, պատերի, առաստաղների և շեպերի մասնագիր | ՃՇ-7 |
| 8. | Քանդման եւ վերանորոգման աշխ. ծավալները | ՃՇ-8 |
| 9. | Տանիքի հատակագիծ, կտրվածք 1-1 | ՃՇ-9 |
| 10. | Տանիքի հանգույցներ | ՃՇ-10 |
| 11. | Տանիքի Փայտե կոնստրուկցիաների մանտաժմ. սխեմա | ՃՇ-11 |

## Վերանորոգման  աշխատանքներն  իրականացնելու  համար պահանջվող  լիցենզիաներ.

Շինարարության  իրականացում`
- բնակելի,  հասարակական և  արտադրական ոլորտ
- էներգետիկական ոլորտ

## Աշխատանքային  ռեսուրսներ

Աշխղեկ`  ինժեներ - շինարար «ԱՔՇ».

ինժեներ - էներգետիկ.

| Չափ.մ. | Մաս. թ. | թերթեր | փաստ. | ստոր. | ամսաթ. | Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի h. 1 մանկապարտեզի հիմնանորոգում `   պատվեր N «ԵՔ-ՊԸԱՇՉԲ-13/85» | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| | | | | | | Ճարտարապետաշինարարական մաս | էտապ | թերթ |
| Նախագծեց | | Ս. Զուբով | | | | | ԱՆ | ՃՇ - 1 |
| | | Հ. Մեսրոպյան | | | | Ընդհանուր տվյալներ | «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ | |
| Ն.Գ.Ճ. | | Հ. Հովսեփյան | | | | | | |

թերթեր: 11